

նույնիսկ մը, մեզմէ ժամ մըն է միշտ որ, հեղինակին ձեռքերուն մէջ, կը դառնայ անձնաւորութիւն, ուրիշ մաս մը մեզմէ որ կը դառնայ ուրիշ անձնաւորութիւն, և այսպէս շարունակաբար, և տակաւին աւելի յաճախ մենք մեր վրայ վերադառնալով կը գտնենք քիչ մը, գիտենք մենք մեզ, աւելի լաւ է մեր շուրջը նայելէն, հասկնալու համար անձնաւորութեան մը կամ վիճակի մը ճշմարտութիւնը: Ո՛չ Աւստրիացիներ, ո՛չ Բոլիւքսթրիներ, ո՛չ Համբուրներ ենք, հասկնալի է: Բայց բոլորս կը կրենք մեր մէջ ամբողջական ձեւը մարդկային վիճակին: Բոլորս ալ զգալու ու վիճակի ենք, և քննադատն աւելի՛ քան ուրիշներ, ճշմարտութիւնը բացառիկ նկարագրի մը:

Եւ յետոյ, — և ստիկա թերեւ աւելի լաւ է գիտ — լքենք միանգամ ընդ միշտ սա հնամենի նախապաշարութեամբ ճշմարտանմանութեան, և կ'ապինք մեր ակնարկները արուեստին ճշմարտութեան և իրականութեան, որոնք տարբեր են հասարակ ճշմարտութենէն և իրականութենէն: Աւելի է հանճարին յատուկ բանն է ներկայացնել, հիացած մեր աչքերուն, կենդանի և գերնական աշխարհ մը, գիտնանք զայն հասկնալ իր բարձրագոյն ճշմարտութեանը մէջ, որուն քով ամենորեակ «ճշմարտութիւնը» չափ տոգոյն, չափ տափակ կը մնայ: Չտաքնապինք բազդատելու մեր շուրջը մեր տեսածներուն, արտակարգ երեւոյթով նշման արարք մը, զոր օտակայն հեղինակը գիտցեր է մեզի ներկայացնել: Իրպէս հարկադրաբար արտագրուելիք, ծայրագոյն և պատճառաւոր արդիւնք չափ մը ընդունելի նախընթացներու:

Ըստ Ֆակէին, ասոնք են Գեղեցիկին յարաբերութիւնները միւս երկու հրամայականներուն հետ:

Հիմա ի՞նչելով այս ընդհանուր նկատողութիւններէն՝ արուեստին հետ աւելի մօտէն կապ ունեցող ուրիշներուն, պիտի հանդիպինք արուեստներու դասաւորման սոսնձեան, զոր հեղինակը կը պարզէ իր *Drame Ancien*, *Drame Moderne*-ին մէջ:

Գեղեցիկին հրամայականը կ'իշխէ բոլոր արուեստագէտներուն վրայ: Բայց արուեստները կը տարբերին իրարմէ: Երկու սոսնձէտով կարելի է նկատի առնել այս տարբերութիւնները, և ստանալ արուեստներու երկու դասաւորում:

Արուեստներու գործադրումին փոսա-

ՀԱՅՅԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

ԱՒԱԳ ՎԱՆՔ

ՏԵՂԱԿՐԱԿԱՆ. — Բարձր Հայոց Դաւանդիկ — Կամախ — գաւառին մէջ, Սիւպուհ լեռան ստորոտը, Կառնի փոքրիկ գիւղին մօտ, կը գտնուէր Աւագ վանքը, որ կը կոչուէր Նաեւ Ա. Թաղեոս Առաքելոյ Վանք, կամ Ա. Լուսաւորչի Անապատ, և Սիւպուհ լեռան բոլոր ուխտատէրներուն աւագագոյնն էր: Մինաստանը ունէր բարձր պարիսպ, ընդարձակ չրջագիծով, և հարիւրէ աւելի սենեակներ ուխտաւորներու համար. — Երուանդ եպոս. Դարանաղեաց Դաւառը, Սիւն, 1927, էջ 213:

ՊԱՏՄԱԿԱՆ. — Ըստ աւանդութեան այս վանքը հիմնած է Ս. Թաղեոս Առաքելով 35 թուին: Հետագային Ս. Գրիգոր Լուսաւորիչ նորոգած է զայն: Վանքը ունէր եկեղեցիներ, յանուս Ս, Աստուածածնի, Ս.

կէտէն, կը նշմարենք երեք խումբ՝ գծագրութեան արուեստները, որոնք Գեղեցիկութիւնը ձեւերով կը յայտնեն աչքերուն, խօսքի արուեստները, որոնք բառերով կը յայտնեն Գեղեցիկը մտքին: Կրթական արուեստները որոնք կ'արտայայտեն Գեղեցիկը շարժումներով:

Այս խումբերէն, իւրաքանչիւրն իր յատուկ կայուն ձեւ ունենալով հանգեցած, բացարձակ կերպով սահմանագծուած չեն: Կրնան պատահիլ ոտնահարումներ և թափանցումներ: Բայց այս ոտնահարումները յանձնարարիկ չեն ընդհանրապէս: Որովհետեւ երբ ինքրիշները իմաստաբար կ'ուզեն ըլլալ կամ բանաստեղծները՝ նկարիչ, ինչպէս երբ երաժիշտները կը յաւակնին դադարաւոր յայտնել, բոլորն ալ կը դառնան պաղ: Որովհետեւ փոքր զգալի պատգամ կը կրօնական իրենց յատուկ տարրագիտները, առանց փոխաբերել ստանալու իրենց չգերաբերող փճ մէկ յատկութիւն:

ԱՄՓՈՓՈՅՑ

ՊԱՐԳԵՆ. ՏԵՂ ԹՈՎԱՆՆԵՍԵԱՆ

(Շարունակելի՛ր՝ 9)

Կարապետի և Ս. Առաքելոց. — Սիւրմէ-
եան, Ա. էջ 79:

Այստեղ իր ուսումը ստացած է Մով-
սէս Վրդ. Երզնկացի ժԳ. դարուն (Հայպ.
էջ 508):

Աւագ վանքի վանահայրերէն կրնանք
յիշել հետեւեալները և.

1. — Սեփանոս Առաքնորդ, 1227. —
Պոստրեան, Հայ Հանր. էջ 317:

2. — Թալեոս Առաքնորդ, 1273. —
Նոյն, անդ:

3. — Հայր Կիրակոս Առաքնորդ, 1366
— 72. — Հանդ. Ամս. 1948, էջ 532:

4. — Գեորգ Վրդ. Երզնկացի, 1383-էն
առաջ վախճանած. — Նոյն, էջ 533: Ուր-
մէեան, Ա. էջ 79:

5. — Գեորգ Վրդ. Գարանդեցի, 1409.
— Հանդ. Ամս. 1948, էջ 533:

6. — Մարտիրոս Վարդապետ, 1439. —
Տաշեան, էջ 49:

7. — Յովնանէս Սպիկոպոս, 1463-
94. — Իր առաջնորդութեան ժամանակ
Յովնանէս Վրդ. Համէլեցի քաջ հոգսորդ
հոն կը դասախօսէր աշակերտներու մեծ
խումբի մը, և Համալսարանի մը վերածն-
ւոյժ Աւագ վանքը, ինչպէս կը յիշատակա-
գրէ Մջղկածազցի Ստեփանոս գրիչ, 1464
թուին: — Հանդ. Ամս. 1892, էջ 116: Ա-
րարատ, 1913, էջ 600-604: Հանդ. Ամս.
1937, էջ 576: Հասկ, 1941, էջ 23:

Աւագ վանքին մեծ ծառայութիւններ
մատուցած է Մաղաքիա Վրդ. Դերջանցի,
1521-30 թուականներուն, շինութիւններ
կատարելով և կրօնաւորները տուրքերէ
ազատելով: Ունեցած է աշակերտներ, ու-
րոնցմէ կը յիշէ Տէր Կարապետը, Տէր Մես-
րոպը, Տէր Եղիան, Տէր Սարգիսը և Տէր
Թադէոսը, և որոնց կը դասախօսէր սաղ-
մոսի վրայ (Հանդ. Ամս. 1948, էջ 540):
Ան աշուսաւորչին և Աւագ վանացն մէկ
մէկ գրական շինք և այնքան զարմանալի
արուեստիւ քանդակիր, որ տեսողքն կու
աքանչանան (Գր. Դար. էջ 339):

Գրիգոր Դորանաղեցի Աւագ վանքի
նշանաւոր վարդապետներէն եւ եպիսկո-
պոսներէն կը յիշէ քանի մը անձեր, որոնք
կ'ապրէին ժՁ. դարու վերջերը, ինչպէս,
Վարդան Եպիսկոպոս, Յակոբ Վրդ. Ճգնիկ,
Հայրապետ Վրդ. Տիւրիկցի և Վրթանէս
վարդապետ:

Ան, Սեպուհ լերան սրբազայրերը գո-
վելու առթիւ, այս վանքն ալ կը պանծա-
ցնէ մի քանի տողով. «Եւ ապա գերա-
հաշակ սրբազան ռուբր աթոռքն հայրապե-
տաց և դասաւորներն վարդապետաց» Աւագ
վանքն, որ չորեքսուսան զլիտով մեծ խոր-
հըրդով օրինակ ունի Աւագ վանք կոչելն,
զոր գրիչն՝ ձանձրութիւն է մեզ գրելոյ և
լսողաց տաղտկութիւնն (էջ 512):

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Աւագ վանքի մէջ
մշակութային կեանք մը ծաղկած կ'երեւի
ԺԳ. դարու սկիզբէն մինչև ԺՁ. դարու
կէսը: Այդ միջոցին ապրող գրիչներէն և
ընդօրինակուած գիրքերէն մեզի ծանօթ են
հետեւեալները.

Ա. — Ստեփանոս Գրիչ, որ 1201ին օ-
րինակած է Աւետարան մը, երկաթագիր և
նկարազարդ, մաքաղութի վրայ, որուն ըս-
տացոյն է եղած Ստեփանոս եղբայր Կոս-
տանդին. — Զօպանեան, Ros. II. էջ 324:

Բ. — Յովնանէս Գրիչ, 1201ին օրի-
նակած է Աւետարան մը, որուն ծաղկողն է
Սարգիս, իսկ ստացողը Ղազար վարդա-
պետ. — Հանդ. Ամս. 1924, 248 թ. 13:

Գ. — Կարապետ Գրիչ, 1227ին օրի-
նակած է Հարանց Վարդ, կամ Յայնաւոր
մը, յոյժ մեծադիր, բոլորազիր, թղթեայ,
Տուրք անուն փրօնիկին փափաքով, և աշ-
խատակցութեամբ Ղազար վարդապետի և
անոր եղբոր Աստուածատուրի. — Մմբատ-
եանց, Գեղարքունի, էջ 407: Հանդ. Ամս.
1948, էջ 530-1:

Դ. — Ստեփանոս Կրօնաւոր, Գրիչ,
1366-72, օրինակած է

1. — Նարեկ, 1366ին. — Կար. Թ.
1514:

2. — Սայի եւ Թուրք Պաւլոսի, 13-
71ին. — Հանդ. Ամս. 1948, էջ 532:

3. — Աւետարան, 1372ին, իր հղբօր
Ներսէսի խնդրանքով. — Հանդ. Ամս. 19-
26, էջ 44-45:

Ե. — Գրիգոր Սարկաւազ, Գրիչ, 1373
-1405: Աշակերտ Յովնանէս Որոտնցիի,
որուն հրամանով օրինակած է,

1. — Աւետարան, 1373ին. — Թ. Աղ-
բար, Բ. էջ 325-7:

2. — Խաղաքի, 1405ին. — Կար. Թ.
661:

Ձ. — Արիստակէս Սեբաստացի, Գրիչ,

1383-1412, աշակերտ Դեորդ Բարունիի (✱ 1383 էն առաջ). օրինական է,

1. — Մանրուսմունք, 1383 էն առաջ, Աւետիք կրօնաւորի խնդրանքով. — Հանդ. Ամս. 1948, էջ 532-3:

2. — Աւեսարան մը նորոգած է 1383ին, պակասները գրելով և կազմելով. — Սիւրմ. Ա. էջ 79:

3. — Ոսկեփորիկ Դր. Տաթեւացւոյ, օրինական է 1412ին. — Նօտարք, էջ 40:

4. — Պոռփիւրի Ներածութեանց վերլուծութիւն Դր. Տաթեւացւոյ, օրինական է 1412ին. — Կար. Թ. 1804:

է. — Հազար կրօնաւոր, Գրիչ, 1409ին օրինական է ձառնիւր մը. — Միւրա. էջ 110:

Ը. — Աւետիք կրօնաւոր, 1411ին օրինական է Մեկնութիւն Մաթթի, Ս. Թ. Թ. 1223. — Հանդ. Ամս. 1948, էջ 533:

Թ. — Խաչատուր կրօնաւոր, Գրիչ, 1418ին օրինական է Հարանց վարձ մը, Յովհաննէս սարկաւազի համար. — Սթան. Թաղ. ԺԼ.:

Ժ. — Մարգարէ Գրիչ, 1432ին օրինական է Աւեսարան մը, Ս. Թ. Թ. 1918. — Հանդ. Ամս. 1948, էջ 533:

ժԱ. — Սիմոն Արեղայ, Գրիչ, որդի Պօղոսի, 1439ին օրինական է Յայնաւուրձ մը, Մովսէս քահանայի համար. — Տաշ. Թ. 7:

ԺԲ. — Քաթիմ Նաղաշ, 1439ին ծագական կարած է Սիմոն արեղայի օրինական Յայնաւուրձը. — Տաշ. Թ. 7:

ԺԳ. — Ստեփանոս Գրիչ Զմկածազցի, 1463-4, որդի ասորի Կարէլի, աշակերտ Յովհաննէս վարդապետի, օրինական է

1. — Առ Որս Նազիրանկացւոյ և Գիրք Պարպումանց Կիւրդի, 1463ին. — Կար. Թ. 91:

2. — Հաւաքածու, 1464ին. — Հանդ. Ամս. 1842, էջ 114-6, Ն. Մառ. Հայկ. Զեռ. Ճեմարանի Արեւ. Լեզ. Ի Պետերբուրգ, Թ. 6:

3. — Յաղապս Նրկնային Քահանայապետութեանց Դ. Արիստագաւացւոյ, 1464ին. — Կար. Թ. 65: Արարատ 1913, էջ 603:

4. — Դիւք Սահմանաց Դաւթի, Կար. Թ. 1782: Մանանդեան, Երեւ. Դպրոց, էջ 281:

ԺԴ. — Գրիգոր Կաֆայեցի, Գրիչ և

Մաղկող, 1464-9, Ստեփանոս Գրիչ օրինական Արիստագաւացւոյ գիրքը ծագած է 1464ին. — Արարատ, 1913, էջ 601: Եւ օրինական է Շարական մը, 1469ին, որուն ստացողն է եղած Արարատ վարդապետ. — Հայ Հանր. էջ 318:

ԺԵ. — Տէր Մատթէոս Սեբաստացի, Կազմող, 1464ին կազմած է Արիստագաւացւոյ վերջին եւ վերջը. — Արարատ, 1913, էջ 602:

ԺԶ. — Աւետիք Գրիչ, 1471ին օրինական է Գիրք Ձեռնադրութեան եւ Հիմնական, Ի վայելումն Տէր Սարգիս Արքեպիսկոպոսի. Ս. Թ. Թ. 1286. — Հանդ. Ամս. 1948, էջ 534:

ԺԷ. — Ասաքել Արեղայ, Գրիչ, 1481-8, օրինական է

1. — Շարական, 1481ին. — Հայ Հանր. էջ 318:

2. — Գոնձարան, 1481ին. — Նոյն, անդ. Հմմտ. Թ. Աղբար, Բ. էջ 308:

3. — Շարական, 1483ին. — Հայ Հանր. էջ 318:

4. — Աւեսարան, 1484ին. — Թ. Աղբար, Բ. էջ 302:

5. — Շարակնոց, 1488ին. — Հանդ. Ամս. 1948, էջ 534:

ԺԸ. — Գրիգոր Արեղայ, Գրիչ, աշակերտ Աւետիք վարդապետի, 1494ին օրինական է Աւեսարան մը. — Հասկ, 1941, էջ 22-3:

ԺԹ. — Հայրապետ Վարդապետ, Գրիչ, 1496ին օրինական է Շարական մը, Յովհաննէս վարդապետի հետ. — Կար. Թ. 1585:

Ի. — Յովհաննէս Եպիսկոպոս, Գրիչ, 1496-1512, աշակերտ Տէր Ներսէսի, նաեւ Աւետիք վարդապետի(?), օրինական է,

1. — Շարական, 1496ին, Երբ դեռ վարդապետ էր, Հայրապետ վարդապետի հետ. — Կար. Թ. 1585:

2. — Շարակնոց, 1512ին. — Հանդ. Ամս. 1948, էջ 553:

3. — Խազկիւրճ + Քահանայարաւ մը. — Կար. Թ. 663:

ԻԱ. — Խաչատուր Գրիչ, 1530ին օրինական է Մանրուսմունք մը, Ս. Թ. Թ. 1685. — Հանդ. Ամս. 1948, էջ 553:

Ն. Վ. ՄՈՎԱԿԱՆ